

Հոկտեմբերի 13-ին Երեւանում տեղի կունենա հայ-ռուսական միջտարածաշրջանային երկրորդ համաժողովը

12-րդ հոկտեմբերի, 2012 թ.

http://www.mta.gov.am/hy/news/item/2012/10/12/news_1251/

Երեւանում հոկտեմբերի 13-ին տեղի կունենա հայ-ռուսական միջտարածաշրջանային երկրորդ համաժողովը, որն այս տարի կանցկացվի "Հայաստան եւ Ռուսաստան. միջտարածաշրջանային երկխոսություն-2012" խորագրով: Լիազումար նիստում հիմնական ելույթներով հանդես կգան ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ ՌԴ տրանսպորտի նախարար, ՀՀ եւ ՌԴ միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նախագահ Մաքսիմ Սոկոլովը:

Համաժողովին մասնակցելու են երկու երկրների կենտրոնական եւ տարածաշրջանային իշխանությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, գործարար շրջանակների ներկայացուցիչներ: Ռուսաստանի 13 սուբյեկտների, ինչպես նաեւ Մոսկվայի եւ Սանկտ Պետերբուրգի պատվիրակությունները, բացի համաժողովի բուն աշխատանքներին մասնակցելուց, մարզերում հանդիպումներ են ունեցել նաեւ հայաստանցի գործընկերների հետ, տեղերում քննարկել փոխգործակցության հեռանկարները: Հայաստանի բոլոր մարզերից եւս պատվիրակություններ են մասնակցելու համաժողովին:

Համաժողովի շրջանակում կստորագրվեն մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր ՀՀ Վայոց ձորի եւ ՌԴ Արխանգելսկի մարզերի, ՀՀ Լոռիի մարզի եւ "Հարավկովկասյան երկաթուղի" ՓԲ ընկերության միջեւ:

Լիազումար նիստի ավարտից հետո կազմակերպվելիք կլոր սեղանների ընթացքում քննարկումներ կծավալվեն Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ առեւտրատնտեսական կապերի զարգացման գործում միջտարածաշրջանային համագործակցության դերի, եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացներին մասնակցության, տրանսպորտի եւ էներգետիկայի, հումանիտար ոլորտներում համագործակցության հարցերի շուրջ:

Համաժողովի աշխատանքների ավարտին կընդունվի ամփոփիչ հայտարարություն:

Հիշեցնենք, որ "Հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում միջտարածաշրջանային համագործակցության նոր նվաճումներին ընդառաջ" խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողովը տեղի էր ունեցել 2011թ. ապրիլի 19-ին Երեւանում: Առաջին համաժողովի արդյունքների ամփոփումից հետո երկու երկրների միջեւ միջտարածաշրջանային կապերի

ակտիվացման նպատակով ՀՀ եւ ՌԴ միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակում ձեւավորվել է միջտարածաշրջանային համագործակցության հարցերը համակարգող աշխատանքային խումբ:

ՏԿՆ հասարակայնության հետ կապերի բաժին

**Եկել է Հայաստանի և Ռուսաստանի միջև ավելի սերտ
միջտարածաշրջանային համագործակցության ժամանակը. Տիգրան
Սարգսյան**

13-րդ հոկտեմբերի,

<http://www.gov.am/am/news/item/9967/>



Երևանում մեկնարկել է հայ-ռուսական միջտարածաշրջանային երկրորդ ֆորումը, որն այս տարի անցկացվում է «Հայաստան և Ռուսաստան. միջտարածաշրջանային երկխոսություն

2012» խորագրով: Ֆորումի բացմանը ներկա են եղել վարչապետ Տիգրան Սարգսյանը, հայ-ռուսական տնտեսական միջակառավարական հանձնաժողովի ռուսական կողմի համանախագահ Մաքսիմ Սոկոլովը և այլք:

Կառավարության ղեկավարը, ողջունելով ֆորումի մասնակիցներին, հույս է հայտնել, որ այն կնպաստի երկու երկրների միջև տնտեսական և հումանիտար կապերի զարգացմանն ու նոր նախաձեռնությունների մշակմանը:

«Հայաստանի և Ռուսաստանի փոխհարաբերությունները կրում են ռազմավարական գործընկերային բնույթ: Քաղաքական և տնտեսական երկխոսություն է հաստատվել պետական կառավարման բոլոր մակարդակներում: Այսօր եկել է ավելի սերտ միջտարաշաղջանային համագործակցության ժամանակը:

Մեր ֆորումի թեման է միջտարածաշրջանային երկխոսությունը: Կարծում եմ, որ միմյանցից սվորելու որոշ բաներ ունենք: Մեր երկրների տարաշրջանային իշխանությունների երկխոսությունը կարող է առաջարկել այն մեխանիզմները, որոնք կնպաստեն շրջանների զարգացմանը: Մենք պետք է մտածենք միջտարածաշրջանային համագործակցության զարգացման մի շարք հատվածների ուղղությամբ: Պետք է ոչ միայն պահպանենք, այլև ամրապնդենք երկկողմ տեղեկատվական տարածությունը, դիտարկենք երկու երկրների տարածաշրջանային շուկաների առաջարկի և պահանջարկի տվյալների բազայի ստեղծումը՝ համապատասխան բիզնես առաջարկների և ծրագրերի ներկայացմամբ»,- ասել է վարչապետը:

Կառավարության ղեկավարի խոսքով՝ անհրաժեշտ է իրականացնել նաև մշտական դիտարկում շուկաներում առկա իրավիճակի վերաբերյալ և տվյալ ժամանակահատվածի համար ներկայացնել համապատասխան առաջարկություններ՝ նվազագույնի հասցնելու բյուրոկրատական, նյութատեխնիկական և վարչական ռիսկերը, որոնք բխում են միջտարածաշրջանային համագործակցությունից:

Վարչապետը հիշեցրել է, որ հոկտեմբերի 12-ին հայ-ռուսական տնտեսական միջակառավարական հանձնաժողովի շրջանակում Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվել է մինչև 2020 թվականը երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագիրը: «Մա համակարգային փաստաթուղթ է, որում առկա են երկկողմ առևտրաշրջանառության և ներդրումային ծրագրերի հավակնոտ աճի տեմպեր, բացահայտվել են երկկողմ տնտեսական համագործակցության բոլոր ուղղությունները:

Գտնում եմ, որ միջոցառումների մշակման և իրականացման գործում տարածաշրջանները պետք է ունենան ակտիվ մասնակցություն, ինչը կարող է լավ հարթակ հանդիսանալ հետագա երկխոսության համար: Մենք պետք է մեր երկխոսությունը հասցնենք պրակտիկ գործողությունների, ինչի արդյունքում անպայման կհասնենք այնպիսի արդյունքների, որոնք այդքան անհրաժեշտ են մեր քաղաքացիներին»,- նշել է Տիգրան Սարգսյանը:

Խոսելով տարածքային համաչափ զարգացման վերաբերյալ՝ գործադիրի ղեկավարը նշել է, որ Հայաստանի կառավարության առաջնայնություններից մեկը տարածաշրջանային ենթակառուցվածքների՝ ճանապարհների, ջրամատակարարման համակարգերի, լոգիստիկ և կրթական կենտրոնների զարգացումն է: «Մենք ջանքեր ենք գործադրում, որպեսզի կյանքի որակը գյուղերում չզիջի քաղաքային պայմաններին: Այդ նպատակով սկսել ենք հստակ ծրագրերի իրականացում՝ տարածաշրջանային զարգացման կենտրոնների ստեղծման

ուղղությամբ: Գյումրիում ստեղծվում է Տեխնոպարկ, որին կհաջորդի Վանաձորը, Դիլիջանում կառուցվում է ֆինանսական և կրթական կենտրոն:

Մեր շրջաններն ունեն զբոսաշրջության զարգացման չօգտագործված հսկայական ներուժ: Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանների առողջարաններն աստիճանաբար վերածվում են լուրջ զբոսաշրջային կենտրոնների, որոնք պատրաստ են ընդունել Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին», - ասել է վարչապետը:

Կառավարության ղեկավարի կարծիքով՝ տարածաշրջանների տրանսպորտային հաղորդակցության ապահովումը պահանջում է ամենօրյա ուշադրություն, քանի որ այն միացնում է երկու երկրները, ստեղծում լավագույն հնարավորություններն ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների համար: Բացի այդ, Տիգրան Սարգսյանն անհրաժեշտ է համարել նաև երկու երկրների առևտրաարդյունաբերական պալատների ներուժի լիարժեք օգտագործումը: «Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ զարգացումը նոր կապերի հաստատումն է: Մենք պետք է անցնենք զարգացման ճանապարհ՝ մեր տարածաշրջանների միջև առևտրային կապերի հաստատումից մինչև կոռպորացիոն կապերի ստեղծում և զարգացում՝ արդյունաբերական տարբեր ճյուղերի շրջանակում», - նշել է Տիգրան Սարգսյանը:

Վարչապետը ներկայացրել է նաև Հայաստանի տնտեսության ներկա վիճակը, զարգացման տեմպերն ու հնարավորությունները:

Համաժողովին մասնակցում են երկու երկրների կենտրոնական եւ տարածաշրջանային իշխանությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, գործարար շրջանակների ներկայացուցիչներ: Ռուսաստանի 13 սուբյեկտների, ինչպես նաև Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի պատվիրակությունները, բացի համաժողովի բուն աշխատանքներից մասնակցելուց, մարզերում հանդիպումներ են ունեցել հայաստանցի գործընկերների հետ, տեղերում քննարկել փոխգործակցության հեռանկարները: Հայաստանի բոլոր մարզերից ևս պատվիրակություններ են մասնակցում միջոցառմանը:

Համաժողովի շրջանակում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր Վայոց ձորի եւ ՌԴ Արխանգելսկի մարզերի, Լոռու մարզի եւ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության միջև:

ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն